ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՏՂԱՏՈՄԱՐԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՎԱԼՅԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Եթե հայ աստղագիտության պատմության մասին բավականաչափ գրականություն կա, ապա աստղագիտական տերմինաբանությունն առ այսօր չի ենթարկվել խոր և համակողմանի ուսումնասիրության, չկան նույնիսկ առանձին աստղագիտական տերմինարաններ։ Այդ բացը լրացնելու համար անհրաժեշտ է աստղագիտական տերմինաբանությունն ուսումնասիրել սկսած նրա ծագումից մինչև զարգացման արդի վիճակը։ Ելնելով աստղագիտության պատմության ուսումնական ձեռնարկում տրված շրջանաբաժանումից[1]*, աստղագիտական տերմինաբանության հետազոտությունը նպատակահարմար է կատարել երեք շրջաններով.* առաջին՝ հին կամ գրաբարյան շրջան *(մինչև XIX դ. սկիզբը),* երկրորդ՝ նախասովետական շրջան *(XIX դ. սկզբից մինչև XX դ. սկիզբը) և* երրորդ՝ ժամանակակից շրջան *(XX դ. 20-ական թվերից մինչև մեր օրերը)**։

Գիտության զարգացման արդի փուլում տերմինահամակարգերում, ինչպես և լեզվի ընդհանուր բառապաշարում, գերակշռում են բաղադրյալ տերմիններն ու բառերը, ինչ չի կարելի ասել գիտությունների կազմավորման փուլի համար, հատկապես այնպիսի գիտությունների, որոնք ծագել են հնագույն դարերում։ Հայ աստղագիտության կամ տոմարագիտության (հնում աստղագիտությունն ավելի շուտ տոմարագիտություն էր) հին շրջանի տերմինների գրեթե կեսը պարզ (արմատական) է. *աստղ : : աստեղ, դէզ||գեղ, ասուպ, եթեր, կամար, շող, շեղ, հոլով=պտոյտ, հիւսիս, հարաւ, երկին(ք), երկիր, սարոս (խավարման պարբերություն) և այլն*** *(աստղագիտական տերմիններ), Նահանջ, դար, ամ, տարի, րոպէ, պահ, նուագ, շաւիղ, ժամ, աւր, աշուն, ձմեռն, Զուկն, Կոյս, Ցուլ, Առիւծ, Շնիկ, Խոյ, Կշիռ, Արծուի, Ջերի, Լուծ, Քնար, Օձ, Նետ, Հրատ, Կարապ, Դելփին և այլն (համաստեղությունների, մոլորակների, աստղերի, ամառն, ուրբաթ, տիւ, գիշեր և այլն (տոմարական տերմիններ), Հայկ, ղերի անուններ)։ Արմատական տերմիններն առհասարակ ունեն մի «թերություն», այն է՝ ի վիճակի չեն արտահայտել բարդ գաղափարներ, բարդ հասկացություններ։ Սակայն փոխարենը խիստ գործուն են նոր բառերի ու տերմինների ստեղծման մեջ։ Այսպես, օրինակ՝* «աստղ *(բնիկ հայ բառ). ածանցման մեջ մտնում է երկու ձևով՝* աստեղ— և աստղ—. *առաջինից ունենք* աստեղաբաշխ, աստեղատուն, աստեղագէտ, աստեղագիտութիւն, աստեղանշմար, բազմաստեղք. *երկրորդից՝* աստղագէտ, աստղանշան, աստղիկ *«արուսեակ. Նաև Աստվածուհին»,* աստղկեան, անաստղ, բազմաստղ, շնաստղ: *Նոր գրականի մեջ* աստղալից, աստղածաղիկ, աստղանիշ *և այլն»*[2]*։ Մի այլ օրինակ.* լույս *արմատական տերմինից Հ. Աճառյանը ներկայացնում է հետևյալ կազմությունները.* «լոյսաբեր *(Արուսեակ),* լուսանայ, լուսատու, լուսին, լուսնակայ, լուսնակ, լուսնեակ»: *Ապա թվարկում է նոր կազմված բառերը.* «լուսաբաց, լուսադեմ, լուսահոգի, լուսաղբիւր, լուսաստղ, լուսամթի, լուսնահող, լուսնաերևի, լուսառուն, լուսփիլի *և այլն»*[3]*։*

---

1 *Բ. Ե. Թումանյան, Լ. Վ. Միրզոյան, Աստղագիտություն, Երևան, 1978, էջ 5։*

* *Հոդվածում կառուցվածքային վերլուծության են ենթարկվում հին շրջանի այն աստղատոմարական տերմինները, որոնք (շուրջ 350 տերմին) ընդգրկված են «Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի» երկհատորյակում [(այսուհետև՝ ՆԲՀԼ), հ. 1, 2, Վենետիկ, 1836, 1837]։*

** *: : տիպաբանական տարբերակներ, || հնչյունաբանական տարբերակներ, — հոմանիշներ։*

2 *Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Երևան, 1971, էջ 278։*

3 *Հ. Աճառյան, նշվ. աշխ., հ. 2, Երևան, 1973, էջ 294։*

Այս երկու տերմինախմբերով իսկ կարելի է պատկերացում կազմել արմատական տերմինների տերմինակազմական կենսունակության մասին։

Բաղադրյալ են այն տերմինները (և բառերը), որոնք բաղկացած են առնվազն մեկ հիմնական և մեկ երկրորդական կամ երկու հիմնական ձևույթներից (կամ բառերից)։ Դրանք կարող են լինել երկբաղադրիչ, եռաբաղադրիչ, անգամ բազմաբաղադրիչ կապակցություններ։ Բաղադրյալ տերմինների մեջ մտնում են՝ 1. բարդ, 2. ածանցավոր և 3. բառակապակցական տերմինները։

1. Գրաբարյան շրջանի հայ աստղագիտական տերմինահամակարգում բարդ տերմինները գերազանցապես երկբաղադրիչ են (եռաբաղադրիչ բարդություններ շատ հազվադեպ են պատահում), և դա բնական է. հայերը շատ վաղուց են հետաքրքրություն ցուցաբերել երկնային օբյեկտների ու երևույթների նկատմամբ, սակայն տվյալ փուլում աստղագիտությունը զարգացման դեռևս այնպիսի մակարդակ չուներ, որը նպաստեր բարդ հասկացություններ բովանդակող տերմինների ստեղծմանն ու մշակմանը։ Այս շրջանում տերմինակազմության և առհասարակ բառակազմության շատ արդյունավետ միջոց է բառաբարդումը, որն իրականացվում է հոդակապով և առանց հոդակապի, ընդ որում առաջինները քանակական գերակշռություն ունեն անհոդակապ բարդությունների նկատմամբ։ Հոդակապով աստղատոմարական տերմիններից են՝ տրամ-ա-չափ, երկր-ա-կշռութիւն (քառակողմեան ծագք աշխարհի), աստեղ-ա-տուն, արեւ-ա-գալ, կաղանդ-ա-ցոյց, տօն-ա-ցոյց, ճրագ-ա-լոյց, ամս-ա-տօն, ամս-ա-գլուխ, օամ-ա-ցոյց, օր-ա-ցոյց, լուսն-ա-ցոյց, ամ-ա-ցուցակ, հր-ա-թիւ, պարզ-ա-տումար, մատն-ա-տումար, զատկ-ա-շաբաթ, պասեք-ա-տօն (տօն զատկի), կրկն-ա-զատիկ (երկրորդ զատիկ), յիս-նակ-ա-մուտ (սկիզբն պահոց յիսնակաց), դար-ա-կոճատ (թիւ բաղկացեալ ի դարէ և ի կոճատէ), մանր-ա-մասն, կրկն-ա-մասն (ժամանակի նվազագույն միավոր), ամս-ա-նահանջ, հասարակ-ա-կէտ, տօթ-ա-ժամ, լուսն-ա-գիր և այլն։ Անհոդակապ աստղատոմարական տերմիններից են՝ շուրջ-ընթացք, կից-ընթաց (ուղեկից), ջահ-ընկալ (ջահակիր), շող-էջ (իշումն շողոյ), անկ-աստեղ (անկումն աստեղ), այգ-աստղ, լուս-աստղ, ական-քթիթ (ժամանակի նվազագույն միավոր), արև-մայր, միջ-օր, մահիկ-եղջիւր և այլն։

Հին շրջանի աստղագիտական և տոմարական տերմիններում զգալի թիվ են կազմում հոդակապով և անհոդակապ տերմինային տարբերակները, որոնք, սակայն, իմաստային փոփոխակներ չեն, քանի որ հոդակապն առհասարակ իմաստազուրկ է[4], օրինակ՝ կիրակ-ա-մուտ||կիրակ-մուտ, ճրագ-ա-լոյց||ճրագ-լոյց, արև-ա-մայր||արև-մայր, ական-ա-քթիթ||ական-քթիթ և այլն։ Սրանցից առաջինն ունի նաև կիրակէմուտ հնչյունաբանական, ավելի ճիշտ՝ շեշտափոխական հերթագայության տարբերակը[5]։ Դա նշանակում է, որ կիրակի բառի վերջին ի ձայնավորը, բառաբարդման ժամանակ (+ա+մուտ) -ա- հոդակապին հանդիպելով, շեշտազրկվում է, որի հետևանքով կարող է և՛ սղվել (կիրակմուտ), և՛ հնչյունափոխվել (կիրակէմուտ)։ Հազվադեպ է պատահում, որ հոդակապով և անհոդակապ տերմինային զույգերը ձեռք բերեն իմաստային տարբերակում։ Հաճախ այդ ձևերից մեկը դուրս է մնում գործածությունից, իսկ մյուս՝ ժամանակակից լեզվի առանձնահատկություններին ավելի մոտ ու ներդաշնակ ձևը, մտնում է բառապաշարի մեջ։

Բաղադրյալ տերմինների կառուցվածքային քննությունն ամբողջական կարող է լինել միայն այն դեպքում, երբ դրանց բաղադրիչներն ուսումնասիրվեն ևս երկու տեսանկյունից. տերմինի բաղադրիչներն ի՞նչ խոսքի մասեր են

---

4 Հայտնի է, որ նախապես -ա- հոդակապը, որպես այդպիսին, գոյություն չի ունեցել։ Գրաբարում ա, ն, է, ու, ի ձայնավորները բառաբնի ձայնավորներ են եղել։ Պատմական զարգացման ընթացքում դրանք կորցրել են իրենց այդ նախնական ֆունկցիան, իսկ -ա-ն դարձել է բառակազմական, տերմինակազմական կենսունակ միջոց՝ հոդակապ (տե՛ս Ա ղ ա յ ա ն, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984, էջ 263)։

5 Նույն տեղում, էջ 254։

և՝ այդ բաղադրիչները տերմիններ՞ն են, թե լեզվի ընդհանուր գործածական բառեր։ Գրաբարյան աստղատոմարական տերմինների կերտման գործում ամենակենսունակ խոսքի մասը գոյականն է։ Տերմինահամակարգում դերակշռում է տերմինների գոյական+բայահիմք կաղապարը. շողէջ, արևագալ, ջահատու, լուսատու, ժամադէտ, աստղագէտ, աստեղաբանակ (բառացի՝ աստղերով խոսող, աստղագուշակ), ամանորաբեր, լուսնալիր, ձմեռնամուտ, շաբաթամուտ, ամսամուտ շուրջընթաց(ք), շրջաբեր(ք) և այլն։ Գործածական են նաև այլ կաղապարներ, ինչպես՝ գոյական+գոյական. այգաստղ, աստեղատուն, լուսակամար, ամսագլուխ, գիշերատիւ, ամսատոն, մահիկեղջիւր, օրաթիւ, օրագիշեր, զատկաշաբաթ, զատկատոմար և այլն, ածական+գոյական՝ շանթեքար, կիսագունդ, մանրամանակ, մանրամասն և այլն, թվական+գոյական՝ միաշաբաթ, երկշաբաթ, եռամանակ և այլն, մակբայ+գոյական՝ հարատիւ, մակբայ+բայահիմք՝ կիցընթաց, թվական+բայահիմք՝ յիսնակամուտ բայահիմք+գոյական՝ անկաստեղ, գոյական+ածական՝ օրաշար և այլն։

Տերմինների կառուցվածքային կաղապարներից է նաև բաղադրիչների տերմինաբանական կաղապարը[6], որտեղ գերակշռում են տերմին+ոչ տերմին բարդությունները, ինչպես՝ աստեղատուն, աստեղաբանակ, ժամագիտ, աստեղագէտ, աստեղաբաշխ, ժամադէտ, լուսատու, արևագալ, ամսագլուխ, ամսատոն, լուսնագիր, օրահմայ, շաբաթամուտ, մահիկեղջիւր և այլն։ Զգալի թիվ են կազմում նաև ոչ տերմին+տերմին՝ կիսահոլով, անկաստեղ, տօթաժամ, մանրամանակ, յարատիւ, կրկնազատիկ, միջնալուսին, միջագիշեր, պարզատոմար և այլն, տերմին+տերմին՝ հասարակածիր, հասարակակէտ, լուսակամար, հասարակահոլով, այգաստղ, գիշերատիւ, լուսնալիր, ամսանահանջ, զատկատոմար, զատկաշաբաթ և այլն, կաղապարները։ Համեմատաբար քիչ է գործում ոչ տերմին+ոչ տերմին կաղապարը, օրինակ՝ պակասընթաց, կիցընթաց, շուրջընթաց, կիսագունդ, կրկնամասն, մանրամասն, Հրագալոյց, ականքթիթ և այլն։

2. Բաղադրյալ տերմինների կարևոր մասն են կազմում ածանցավոր տերմինները։ Իր կազմավորման փուլում հայ աստղագիտական տերմինահամակարգը նախածանցավոր տերմիններով առանձնապես հարուստ չէ։ Պատահում են և՛ միայն նախածանցներով տերմիններ (ճակակայ, ճամագօտի, գերեկ, ցայգ, արամաշափ, արամագիծ), և՛ տերմիններ, որոնց կազմությանը միաժամանակ մասնակցել են նախածանցներ ու վերջածանցներ (անկիսակ, անմոլորակ, մակընթացութիւն, ապախտարք և այլն)։

Գրաբարյան աստղագիտական տերմինահամակարգում գերակշռում են վերջածանցավոր տերմինները։ Վերջածանցներն, ըստ իրենց տարբեր խոսքի մասեր կերտելու առանձնահատկության, բաժանվում են գոյականակերտ, ածականակերտ, մակբայակերտ, բայակազմական խմբերի։ Ամենագործուն վերջածանցներն ինչպես բառակազմության, այնպես էլ տերմինակազմության մեջ, գոյականակերտներն են, որոնցից առավել արդյունավետ են -ութիւն-ը և ումն-ը. հոլովականութիւն, տեղատուութիւն, մշտաշարժութիւն, մշտափայլութիւն, յառաջշարժութիւն, յարատևութիւն, շրջաբերութիւն, պակասութիւն, զուգորութիւն, հասարակաւորութիւն, երկրակշռութիւն, բոլորութիւն, ջահրնկալութիւն, նորամսութիւն, կարգառութիւն, պարառութիւն (շրջան տարւոյ), երեկութիւն, լրականութիւն, լուսալրութիւն, լուսնանաւութիւն, լրումն, խաւարումն, պարայածումն, ծագումն, խոտորումն, թաւալումն, հոլովումն, բոլորումն, յածումն, ցոլումն, շողումն, աղամողումն, աստեղաբորբոքումն (աստղի բռնկումը), տատանումն և այլն։ Հանդիպում են նաև գոյականակերտ այլ վերջածանցներով տերմիններ, ինչպես՝ -անակ. եղանակ, անցանակ (զատիկ), շրջանակ, -ունակ. պարունակ (շրջան, կամար), -ակ. մոլորակ, յիսնակ, -ք. արևահարք,

---

6 Լ. Ղազանչյան, Հայերեն լեզվաբանական տերմինների համակարգային-կառուցվածքային վերլուծություն («Լեզվի և ոճի հարցեր», պր. 4, Երևան, 1977, էջ 306)։

շրջաբերք, արեւելք, արեւմուտք, -եակ. արբանեակ, յօթնեակ (շաբաթ), բոլորեակ (տիեզերք)։

Ածականակերտ վերջածանցներով տերմինները քանակով զիջում են գոյականակերտներով կազմվածներին։ Դա, անշուշտ, վկայում է գոյականակերտ ածանցների առավել գործուն լինելու մասին։ Օրինակներ՝ -աւոր. տտնաւոր, գիսաւոր, վարսաւոր, -ական. շրջաբերական, մոլորական, -ող. համարող (աստղագետ, մաթեմատիկոս), -եալ. յառաջածագեալ, -ակ. վատախտարակ (չարաստղ, չարաբախտ)։ Աննշան քանակությամբ հանդիպում են նաև բայակազմական վերջածանցներով կազմված տերմիններ, ինչպես՝ շրջագայանալ, խամրանալ և այլն։

3. Հայ աստղագիտական տերմինահամակարգն իր կազմավորման ու զարգացման առաջին փուլում բառակապակցություններով առանձնապես հարուստ չէ։ Այդուհանդերձ, ՆԲՀԼ-ում տեղ գտած բառակապակցությունները չափազանց հետաքրքիր են ուսումնասիրման համար, հատկապես, երբ դրանք դիտարկվում են համապատասխան հասկացությունների ժամանակակից անվանումների կողքին, ինչպես՝ նորանալ լուսնի— նորալուսին, աստղ սլացեալ-ասուպ և այլն։

Գրաբարյան փուլում հայ աստղատոմարական տերմինահամակարգը չափազանց հարուստ է հոմանիշներով, ինչը գիտության լեզվում անցանկալի երեվույթ է։ ՆԲՀԼ-ում կան այնպիսի բառակապակցություններ, որոնք տերմինահամակարգում ունեն իրենց մեկ բառով արտահայտված հոմանիշները, ինչպես՝

աստղ առաւօտին կամ առաւօտու —Արուսեակ, Աստղիկ
երկնամիշակ կէտ —ժամադիտակ, այժմ՝ գիշերահավասար
կամար կենդանակերպից =զոդիակոս
սայլակերպ աստեղք =Սայլք (Մեծ Արջը և Փոքր Արջը)
շուրջ տալ =թաւալել (պտտվել)
աստղ սլացեալ =թռիչք‖աստեղաձիգք‖ասուպ։

Կան և այնպիսի բառակապակցություններ, որոնք չունեն միաբառ հոմանիշներ, ինչպես՝ եօթնաստեղեան խորանք (յոթ մոլորակների գոտի)=եօթն մոլորակք, ագեւոր աստղ=գիսաւոր աստղ=տռճաւոր աստղ=վարսաւոր աստղ (այժմ՝ գիսաստղ)։

Հին շրջանի աստղագիտական տերմինահամակարգում նորմավորվածության բացակայության արդյունք են տերմինային որոշ շարքեր, ինչպես՝ Յարդգող— Յարդագող— Հետ(ք) յարդգողի— Ծիր յարդգողի— Ծիր Կաթին–Կաթին ծիր։ Այս հասկացության պատմական զարգացման հետևանքով ժամանակակից գիտական տերմինահամակարգում ընդունվել է Ծիր Կաթին տերմինը, իսկ Հարդագողի ճանապարհ կապակցությունն ավելի հատուկ է գեղարվեստական, բանաստեղծական ոճին։ Տոմարական հասկացություններ արտահայտող բառակապակցությունները նույնպես քիչ են։ Դրանցից են՝ անխաղաց կամ անշարժ տոմար, Հայկայ շրջան, վերջատօնակ տօն (երկրորդ զատիկ), վերագիր տոմարական, տանուտէր տարւոյ և այլն։

Կառուցվածքային վերլուծության ժամանակ ընդունված է տերմին-բառակապակցությունները քննել նաև ըստ դրանց բաղադրիչների քանակի, ընդ որում, առանձնացվում են երկբաղադրիչ, եռաբաղադրիչ և բազմաբաղադրիչ տերմիններ։ Կքննենք միայն երկբաղադրիչ տերմին-կապակցությունները, քանի որ եռաբաղադրիչ և բազմաբաղադրիչ կապակցություններ ՆԲՀԼ-ում չեն հանդիպել, որը, սակայն, հիմք չի տալիս ենթադրելու, որ այդպիսիք չեն եղել աստղագիտության կազմավորման փուլում։

Աստղագիտական տերմինահամակարգում առավելապես տարածված են այն բառակապակցությունները, որոնց մեկ բաղադրիչն ածական է, երկրորդը՝ գոյական, և դա պայմանավորված է ածական+գոյական (գերադաս անդամ) կա-

դապարի դասակարգողական հատկանիշով[7]։ Այս կապակցության մեջ գոյականն արտահայտում է տվյալ գիտահամակարգի որևէ ընդհանուր գաղափար, հասկացություն, իսկ ածականը կոնկրետացնում է այն՝ դրսևորելով որոշակի հատկանիշ, օրինակ՝ եօթնաստեղեան խորանք, սայլակերպ աստեղք, ագեւոր աստղ, տտնաւոր աստղ, անխաղաց տոմար, անմոլար աստղ, հասարակ աւր (միջօրե), երկնամիջակ կէտ և այլն։

Եթե ածական+գոյական *կաղապարով գրաբարյան և ժամանակակից տերմինակապակցություններում կա շարադասական համապատասխանություն, ապա* գոյական+գոյական *կաղապարով կապակցություններում վիճակն այլ է։ Ժամանակակից լեզվին հարազատ է* գոյականի սեռական հոլով+գոյականի ուղղական հոլով *(գերադաս անդամը ետադաս է) տերմինակապակցությունը, իսկ գրաբարում ունենք* գոյականի ուղղական հոլով+գոյականի սեռական հոլով *(գերադաս անդամը նախադաս է) կապակցությունը, ինչպես՝ հետք յարդգողի, աստղ առաւստու, տանուտէր տարւոյ, ծնունդ լուսնի և այլն։ Պատահում են նաև* դերբայ+գոյական *(նորանալ լուսնի, լնուլ լուսնի),* գոյական+դերբայ *(աստղ սլացեալ),* գոյական+ածական *(վերադիր տոմարական) կաղապարներով բառակապակցական տերմիններ։*

Այսպիսով, հին շրջանի աստղատոմարական տերմինների վերլուծությունից պարզվում է, որ աստղագիտական և տոմարագիտական տերմինների կառուցվածքային տիպերի համամասնությունը գրաբարում փոքր-ինչ այլ է. ժամանակակից աստղագիտական տերմինահամակարգում գերիշխում են բաղադրյալ տերմինները, իսկ հին շրջանում պարզ (արմատական) տերմինները կազմում են ողջ համակարգի գրեթե կեսը։ Հին շրջանում բարդ և բառակապակցական տերմինները գերազանցապես երկբաղադրիչ են։

СТРУКТУРНЫЙ АНАЛИЗ АСТРОНОМИЧЕСКИХ И КАЛЕНДАРНЫХ ТЕРМИНОВ ДРЕВНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА

ВАЛЯ АВЕТИСЯН

Резюме

Анализ астрономических и календарных терминов древнеармянского языка, отраженных в «Новом словаре армянского языка» (около 350 терминов), показывает, что пропорциональность структурных типов астрономических и календарных терминов в грабаре несколько иная, чем в современном армянском языке. Если в современном периоде в системе астрономических терминов преобладают составные структуры, что обусловлено высокой степенью развития науки, то в древнеармянском языке простые (корневые) термины составляют почти половину всей системы, причем термины образуются такими средствами, как словосложение (в частности, конструкции с соединительной гласной и без нее) и суффиксация (префиксальные, суффиксальные и префиксо-суффиксальные образования). Рассмотрение структурных моделей астрономических терминов проводится с точки зрения категориальной (частеречной) характеристики компонентов и их терминологической значимости (являются ли они терминами или принадлежат к общеупотребительной лексике).

---

7 Լ. Ղազանչյան, նշվ. աշխ., էջ 305։